ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՍՈՒՐԵՆ ՍԱՂՈՒՄՅԱՆ

Հայկական վիմագիր արձանագրություններում, ինչպես և ձեռագրերում[1] օգտագործվել են բազմաթիվ համառոտագրություններ, որոնք, Կ. Ղաֆադարյանի դասակարգմամբ, կատարվել են պայմանական նշաններով, պատվագրությամբ և փակագրով[2]։ Պատիվ (գուբ, քաշ) կոչվող նշանով և կետագծային զանազան «պայմանական նշաններով» սղվում են բառի, հատկապես սրբագործված անունների և կոչումների մեկ կամ մի քանի տառեր։ Վիմագրերում համառոտագրման առավել տարածված ու ընդհանրական ձևը կցագրումն է, որը Ա. Գ. Աբրահամյանի և Կ. Ղաֆադարյանի կարծիքով կոչվում է նաև կապագրություն ու փակագրություն[3]։ Մենք փակագրություն ենք համարում հիմնականում միատառ կցագրերը (կապագրերը), որոնք մեկ կամ մի քանի բառեր են։

Կցագիր համառոտագրերը օգտագործվել են դեռևս հնագույն վիմագիր տեքստերում՝ սկզբում սակավ, իսկ XI դ.՝ ավելի հաճախակի։

Հայկական մշակութային կենտրոններում (Հաղբատի, Սանահինի, Տաթևի, Գանձասարի, Գլաձորի վանքեր, Գոշավանք, Նորավանք, Վահանավանք, Հովհաննավանք, Ղրիմի ս. Խաչ և այլն) փորագրիչի աշխատանքը թեթևացնելու և տեղ ու ժամանակ խնայելու նպատակով[4] ստեղծվել են նաև յուրահատուկ կապագրային համակարգեր։ Յուրաքանչյուր դպրոց ունեցել է իր նախասիրությունները, սակայն ընդհանրական են եղել համառոտագրման սկզբունքներն ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

Կապագրերը մեծ մասամբ արվել են Ա, Մ, Ռ, Ս, Թ, Ո, Ն երկստեղ տառերի վրա։ Սակայն հաճախ կցվել են նաև Գ, Դ, Կ, Պ, Ե, Տ տառերին։ Կցագրման պարզագույն ձևը մեկ տառամայրի վրա երկրորդ տառի կցում-հարմարեցումն է։ Այդպիսի կցագրեր են օգտագործված Ավանի, Օձունի, Մատաստրայի, Եղվարդի, Պեմզաշենի, Հռիփսիմեի և այլ հուշարձանների VI—VII դդ. վիմագրերում։ Դրանց լավագույն նմուշներից մեկն էլ պահպանվել է Զովունիի Պողոս-Պետրոս եկեղեցու հյուսիսային պատի ներսի որմնասյան վրա։ Այն անաղարտ մեզ է հասել VI դարից և ունի հետևյալ բովանդակությունը՝ ՔՐԻՍՏՈՂՈՍ ԱՂՍՏՈՒԱՂԾ ՅԻՇԵԱ /ԶԳՐԻԳՈՐ ԳՆ/ԹՈՒՆԵԱՑ ՏԷՐ, ուր կան դուր նշանով համառոտագրված ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ բառերը և ԵՍ, ՈՐ, ՆԵ կապագրերը (նկ. 1)[5]։ Ինչպես հայտնի է, Գրիգորը Նիդ-Ապարանի իրավատեր

---

1 Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 187—200, 300—311։

2 Կ. Ղաֆադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 64—69։

3 Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ.։

4 Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 55։

5 Ղ. Ալիշանը («Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 248) և նրան ընդօրինակող Կ. Կոստանյանը («Վիմական տարեգիր», ս. Պետերբուրգ, 1913, էջ 4) ազատ ընթերցմամբ ներկայաց-

Գնթունյաց նախարարական տան ականավոր ներկայացուցիչն էր և արձանագրության ժամանակը ամենևին կասկած չի հարուցում։

Կապգրման բարդ ձևը մեկ տառամայրի վրա երկու և ավելի տառերի պատկերումն է, որի դեպքում տառերի քանակն ու հաջորդականությունը կարելի է որոշել միմիայն կոնկրետ տեքստից ելնելով։ Այս հարցին մանրամասն կանդրադառնանք ստորև։

Նկ. 1

Արաբական խալիֆայության թուլացման, հայկական նախարարական տների հզորացման և պետականության վերականգնման շնորհիվ IX դ. կեսից երկրում կրկին ծավալվում են շինարարական աշխատանքներ։ Արագորեն ծաղկում են ոչ միայն Բագրատունյաց բնօրրան Շիրակը, այլև Սյունիքը, Գեղարքունիքը։ Այդ շրջանում նորակառույց շինությունների տրմերին փորագրվում են կառուցողական, նվիրատվական բնույթի արձանագրություններ, արտոնագրեր։ Սակայն IX—X դդ. կապգրային համակարգում առաջընթաց չի նկատվում։ Ավելին, կարծես խուսափում են դրանից։ Այսպես՝ առանց կապգրերի են Կոշի և Արուճի միջև 867 թ. ծագած ջրի վեճը կարգավորելու (Արուճի տաճար), Շողագա վանքի (879—883 թթ.), Տաթևի վանքի[6] (895 թ.) և Գնգե-

---

նելով այս արձանագրությունը, այն վերագրել են IX դ.։ Իսկ Գ. Հովսեփյանը ներկայացնելով արձանագրության վերջին մասը, այն համարել է V—VI դդ. դորմ (տե՛ս նրա «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», պրակ Գ, Նյու-Յորք, 1944, էջ 30)։ Հոդվածում ներկայացված լուսանկարները սիրով կատարել է Վ. Ս. Խաչատրյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

6 «Դիվան հայ վիմագրության» (այսուհետև՝ «Դիվան»), պրակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 13—14, արձ. 1—7։

վանքի[7] (932—936 թթ.) կառուցողական արձանագրությունները։ Կապգրեր չկան նաև 881 թ. Գրիգոր Ատրներսեհյանի Մ. Մաղրայում կանգնեցրած խաչքարի[8], Շողաղա վանքի 895 թ. խաչքարի, Արուճի տաճարի 987 թ. Սմբատ շահնշահի հրամանագրի, Թուսկյուլիի (Վարդենիսի շրջան) 989 թ. խաչքարի, Ոստի 990 թ., Երերույքի 1028 թ. վիմագրերում, թեև գրանցում կան պատվոնշանով սղումներ։ Սակայն սխալ է կարծել, թե ինչ-որ ժամանակ կապգրությունը մոռացության է մատնվել։ Այսպես, Սևանի վանքի կառուցողական[9] (874 թ.) արձանագրությունում ունենք մի շարք կցագրեր։ Կապգրեր կան նաև Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոսի 897 թ. տապանագրում (ՈՒ), Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցու արևելյան ճակատի Կյուրիկե և Սմբատ թագավորների անվան հիշատակության մեջ (ԱԻ, ՈՐ)[10], Զորագյուղի Մասրուց անապատ վանքի 989 թ. խաչքարի վիմագրում (ՈՐ), Հերհերի ձորահովտի Կարմրաշեն գյուղի 990 թ. խաչքարի արձանագրության մեջ (ԳՈՐ, ՈՐ)[11] և այլն։

X դ. հետո կապգրերը հետզհետե լայն տարածում են ստանում։ Մարմաշենի վանքի՝ Վահրամ Պահլավունու 1029 թ. ընդարձակ տարեգրության մեջ դրանց թիվը հասնում է մեկ տասնյակի։ Կցագրերով հարուստ են Վահանավանքի 1032 թ.[12] և նույն դարի երկրորդ կեսում նույն հաստատությունում փորագրված արձանագրությունները։ Բերենք դրանցից միայն մեկ օրինակ.



ՀԼ ԱՅՈՅ ԹԼՈՒԻՆ, ՇԻՆ (1076) / ԶՔՈՒՐԴԻԿ / ՄԱՐԵԶՐԵՑԻ / ՅԱՂԱԻԹՍ ՅԻ/ՇԵՑԷՔ, ԱՂ/ԱՉԵՄՔ[13]։

Սկսած XII դ. վերջերից, երկրի տնտեսական վերելքին զուգընթաց, ծավալվում են շինարարական աշխատանքներ. նվիրատվություններ են արվում վանական-ֆեոդալական հաստատություններին, որոնց մասին և, իբրև հրաման ու վճիռ, շինությունների որմերին փորագրվում են մեծաքանակ արձանագրություններ։ Դրանցում կապգրերը ընդունում են համատարած բնույթ։ Այդպիսի կապգրերով են փորագրված Քոբայրավանքի Երրորդ եկեղեցու հյուսիսային պատի վիմագրում ԽԱՓԱՆԵ (գծ. 1), Սանահնի վանքի Ամենափրկիչ ժամատան մուտքի 1181 թ. արձանագրության ...Ն ՍԱՐԳՍԻ[14] (գծ. 2), Հաղբատի վանքի Մեծ գավթի հարավ-արևելյան ավանդատան բարավորի 1189 թ.

---

7 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, Վայոց ձոր, կազմեց Ս. Դ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 13—15, արձ. 1—8։

8 «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, Գեղարքունիք, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 334, արձ. 1358։

9 Կ. Ղաֆադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, էջ 68։

10 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 77, արձ. 3։

11 «Դիվան», պրակ III, էջ 42, արձ. 102։

12 «Դիվան», պրակ II, էջ 137, արձ. 393։

13 Արձանագրությունը հրատարակել է Գր. Գրիգորյանը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1970, № 10, էջ 89)։

14 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 79, արձ. 12։

վիմագրի ՎԱՆԱՆԵ (գծ. 3)[15] բառերը։ XIII—XIV դդ. կցագրվում են գրեթե բոլոր տառերը։ Այսպես՝ Վայոց ձորի Հորբադրդ գյուղի 1291 թ. խաչքարի արձանագրության մեջ ունենք ԱՐԵԱՄԲ ԱՆՄԱՀ, ԹԱԳԱՒՈՐԻ (գծ. 4)[16], Թանահատի (Գլաձորի) վանքում՝ ՄԻԱԲԱՆՔՍ, ՄԻԱՅԲԱՆՔ, ԻՄ ՈՐԴԻՔՍ, ԽԱՓԱՆՈՂՔ (գծ. 5)[17], Հասան Պռոշյանի կին Թաճերի 1307 թ. նվիրագրության մեջ՝ ՀԱՅՐԵՆԻ ՏԱՆՍ ՄԵՐ ԹԱՆԱՏԻ ՎԱՆԱՑ (գծ. 6)[18] և այլն։ Մակարավանքի գավթի (1220-ական թվ.) կճուճներից մեկի վրա կապգրված է ԴԱՒԹԻ (գծ. 7), Արասելի վանքի գավթի հյուսիս-արևելյան սյան վրա, ԳՐԳՈՐԻԿ անվան հիշատակությունից ցած՝ ՍՄՈՒՐՈՒԲ ԽԱՉՍ (գծ. 8), Գեղարդավանքի ժայռափոր գավիթ-տապանատան սյուներից մեկի վրա, Սիմեոն ռաբունապետի նվիրագրության մեջ՝ ՊԱՏՍՊԱՐԱՆ, ԲԱՆԻՒ (գծ. 9), Վայոց ձորի Սպիտակավոր-Աստվածածին վանքի 1351 թ. խիստ կարևոր մի արձանագրության մեջ՝ ԿԱՐԱՊԵՏ, ԿԱՐԱՊԵՏԻՆ, ՍՊԻՏԱԿԱՒՈՐ (գծ. 10) և այլ ուշագրավ կապգրեր։

Համառոտագրության հիմնական սկզբունքները պահպանվում են հետագա դարերում ևս, թեև տառերի ձևերը էական փոփոխությունների են ենթարկվում։ Թեոդոսիայի ս. Սարգիս եկեղեցու հյուսիսային պատի 1623 թ. արձանագրության մեջ կապգրված է ՎԱՐԴ ՊԱՐՈՆԻՆ (գծ. 11), իսկ Ղրիմի ս. Խաչ վանքի 1751 թ. խիստ կարևոր մի բնագրի մեջ՝ ՆՈՐՈԳԵՑԱՒ ՍՄՈՒՐՈՒԲ ԽԱՉ ՎԱՆՔՍ (գծ. 12)։

Կապգրերով չափազանց հարուստ են Հոռոմայրի վանքի և նրա մոտակայքի ժայռի վրա փորագրված բազմաթիվ արձանագրությունները։ Ահա դրանցից մեկը[19] (գծ. 13).
ԿԱՄԱՒՆ ԱՄՍՏՈՒԾՈՅՑ ԵՍ ՈՒԱՆԷՍ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԽԱԹՈՒՆՍ ԵՒ ԶԱՔԱՐՐՈՅ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍՄՈՒՐՈՒԲ ՆՇԱՆԻՍ ԵՒ ՏՎԱՔ ԶՄԵՐ ՀՈԳՈ ՊԱՇԱՐՆ, ՀԱՅՐ ԽԱՑԶԱՏՈՒՐ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԶՆԻԿՈՂԱՈՍԻ ՏԱՒՆԻ ԺԱՄՆ ԶԱՄԵՆԷՆ ԵԿԵՂԷՑԻՔՍ. ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ԵԱՄՍՏՈՒԾՈՅՑ ԵՒ ԿԱՏԱՐԻԶՔՆ ԱՒՐՀՆԵՆ Ի ՏԷԵԱՌՆՂԷ։ ԹՎ. ՉԿԵ (1316)։

Աշոտավանի (Սիսիանի շրջան) եկեղեցու բեմում իբրև սեղանաքար օգտագործված խաչքարի վիմագրի կցագրերը ևս արժանի են ուշադրության (գծ. 14). ԿԱՄԱՒՆ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՄՍՏՈՒԾՈՅՑ ԵՍ ԱՍԱՅԵՍԷՍ? ՈՐ/ԴԻՆ ԳԱՅՂԱՅ/ԶԱԳ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԼԱՅՍ. ՅԻՇԵՑ/ԷՔ Ի ՔՐԻՍՏՈՅՍ։ ԶՓՈ/ՓԽ/ԻԿ։ /Թ.՝/ ՉՂԱ (1342)[20]։

Վարդենիսի շրջանի Զախրլու գյուղի հարավային կողմի գերեզմանատան խաչքարերից մեկի արձանագրության[21] կցագրերը ևս ուշագրավ են (գծ. 15). ԱՄՍՏՈՒԾՈՅՎ ԵՍ ՍԱՀԱԿՍ ԿԱԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԵՂԲԱՒՐ ԻՄ ՍԻՄԷՈՆԻՆ. /Ի ԹՎ.

---

15 Կ. Ղաֆադարյան, Հազբատ, Երևան, 1963, էջ 124, արձ. 43։

16 «Դիվան», պրակ 3-րդ, էջ 165, արձ. 505։

17 Նույն տեղում, էջ 79, 84, 79, 80, արձ. 216, 231, 217, 220։

18 Նույն տեղում, էջ 76, արձ. 209։

19 Արձանագրությունը, բազմաթիվ վրիպումներով, հրատարակել է Ս. Ջալալյանը (տե՛ս նրա «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան», մասն Ա, Տփխիս, 1842, էջ 96) և նույնությամբ տեղ է գտել Կ. Կոստանյանի կազմած «Վիմական տարեգրի» մեջ (էջ 100)։

20 Փոփխիկը, հավանաբար, խաչքարը կերտող վարպետն է, իսկ քիվի Կամաւն բառը՝ կրկնություն։ Այս, ինչպես և Տոլորսի շրջապատի շուրջ 30 արձանագրություններ զուրս են մնացել «Դիվանի» II պրակից։

21 Այս գյուղից մեզ հայտնի 12 արձանագրություններից միայն երկուսն են մտել «Դիվան»-ի IV պրակի մեջ (էջ 308)։

ՊՀԶ (1427)։ Նույն շրջանի Դաշքենդ գյուղի ս. Աստվածածին եկեղեցու շրջապատի խաչքարերից մեկի վրա փորագրված է (գծ. 16). ԿԱՄԱՒ ԱՐՍՏՈՒԾՈՅՅ ՄԵՔ ՄԻՐՁԷՍ ԿԱԿՄՆԵՑԱՔ ՁԽԱՁԵՐՍ / ԲԱՐԵԽԱՒՍ ՀԱՒՐՆ ԻՄ ԱՄԻՐԳ/ՈՒԼԻՆ, ՆՂՐԱՒՐ ԻՄ ՂՈՒԼԻՆ, ՄԱՒՐ ԻՄ ԿՈՒԼԸՍՏԼԱՆԻՆ։ / Թ. ՋՀԸ (1529)[22], իսկ էջմիածնի շրջանի Աթարբեկյան գյուղի եկեղեցու որմին ագուցված խաչքարի բիվին (գծ. 17)՝ ՍՐՈՒՐՅԲ ԽԱՉԻՍՅ ԲԱՐԼԵՅԽԱՒՍԼԷՅ ՏԷՐ ՄԽԻԹԱՐԻՆ. / Թվ. ՌԾ (1601)։



Նկ. 2

Դաշքենդ գյուղի խաչքարերից մեկի ճակատի 1650 թ. արձանագրությունը հրատարակել է վաստակաշատ Ս. Բարխուդարյանը[23], իսկ հյուսիսային կողմը վրիպել է վիմագրագետի աչքից, այն է. ԱԼՍՏՈՒԾՈՅՎ ԵՍ ԽԱ/ՍԻՄ. ՈՐ/ԴԻՆ ԻՄ ՄԱՄՐ/ԹՐԱՅՍ ՄԻՐՁ/ԱՅԽԱՆ Կ/ԱՆԿԵՑԱՆՔ/ ՍԼՈՒՐՅԲ ԽԱՉՍ Բ/ԱՐԷԽԼԱՒՅՍ ԱՐՍՏՈՒԱՅ/ԾԱՏՈՒ/Ր ՔԼԱՅՀԱՆԵՍ։ / ԱՆԱՆԻԱ/Յ ԿԱՉՄ/ՈՂ ԽԱ/ՉԻՍ (գծ. 18)։

22 Հուշարձանների պահպանության վարչության դիտական արշավախումբը 1976 թ. Վարդենիսի շրջանում հայտնաբերել է 300 անտիպ արձանագրություններ (մասնակցությամբ Ա. Մ. Ենգոյանի)։

23 «Դիվան», պրակ IV, էջ 325, արձ. 1324։

Հալիձորի բերդում (Ղտփանի շրջան) պահպանվում է ձեռքին սղոց և ուրագ բռնած մարդու հարթաքանդակով մի տապանաքար, որի մյուս կողին արձանագրված է (գծ. 19). ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՂՊԵՃՅԻ ԽՈՋԱ ՊԱՂՏԱ/ՍԱՐԻ ՈՐԴԻ ՈՒՏԱ ՂԵԱՆԴԻՆ. ԹՎ. ՌՄԼԷ (1788)[24]։

Առինջի պատմական գերեզմանոցի խաչքարերից մեկի վրա կապգրերով արձանագրված է (նկ. 2). ԿԱՆԿՆԵՑԱՒ Խ/Ա/ՉՍ Ի ԲԱՐԷԽԱՒՍՈՒ/ԹԻԼ ԽՈ-ՅԱԴԵՂԻՆ։ Կ/Ա/ՉՄ/Ո/Ղ ԱՄՍՈՒԱ/ՇԱՏՈՒՐ ԵՒ ՇՆՈՂՍՆ ԻՒՐ / ՅԻՇ/Ե/Յ-Յ/Է/Ք։ ԹՎ. ՊՀԴ (1424)։

1854—1954 թթ. կերտված ուշագրավ քանդակներով տարաձև տապանաքարեր ու կոթողներ կան Շամշադինի շրջանի Թովուղ, Ջինչին և Բերդ գյուղերի գերեզմանոցներում, որոնք պատրաստել են Թովուզեցի շնորհալի նկարող, ձևավորող, վարպետ Պետրոս Սաֆարյանը և նրա որդիներ Սեգրակը, Միսակն ու Ենգիբարը։ Նրանք, ինչպես նաև համագյուղացի վարպետ Սուրեն Հայրապետյանը, իրենց ստեղծած գերեզմանաքարերի տապանագրերում հաճախ են օգտագործել հետևյալ կապգրերը՝

Ա-ԱՒ . Մ-ԱՄ . Ա-ԱՆ . Ա-ԱՆ . Ա-ԱՒ . Մ-ԱՐ . Կ-ԿԱ . Կ-ԿԻ . Մ-ՄԱ .
Ղ-ՂԵ . Դ-ՂՀ . Ե-ՂԵ . Ն-ՂԵ . Ե-ՂԻ . Ն-ՂԻ . Ն-ՂԱ . Մ-ՄԻ . Ր-ՈՐ .
Ո-ՈՍ . Պ-ՊԱ . Ն-ՆՈՒ . Պ-ՊԵ . Ա-ՍԱ . Ռ-ՐՈՒ . Կ-ԿԱՐ . Կ-ԿԱՄ .
Ն-ՆԱՄ . Մ-ՄԱՐ . Ն-ՆՈՐ . Պ-ՊԱՐ . Ն-ՆՅԻ . Փ-ՓԱՐ . Փ-ՓԱՐԵ

Այսպիսով, վստահորեն կարելի է ասել, որ համառոտագրությունը, այդ թվում փապգրությունը եղել է վիմագրության ուղեկիցը։ Այն ծնվել է նրա հետ միասին, և հաճախակի գործադրությամբ հարատևել է մինչև մեր օրերը։ Կցագրությունը միաժամանակ դարձել է վիմագրերի ձևավորման անհրաժեշտ տարրը։

Սովորական և անտվոր թվացող բյուրավոր կապգրեր կան հայկական վիմագրերում։ Կապգրային համակարգում առաջինը, որ աչքի է զարնում, դա բառերը որոշակի պարզությամբ ներկայացնելու ափնհայտ միտումն է։ Սակայն միշտ չէ, որ անցյալի գրիչներին պարզ ու հասկանալի թվացող կցագիր-կապգրերը հեշտությամբ վերծանվում են։ Եթե նկատի առնենք նաև, որ կցագրերը միշտ չէ, որ «բացվում» են տառերը ձախից աջ հաջորդաբար ընթերցելով, ապա պատկերը պարզ կդառնա։ Տառերը հաջորդաբար կարդալու դեպքում Սպիտակավորի վերոհիշյալ կապգրերից մեկը կստանա ՊԿԱՏՆԻ անիմաստ տառաշարքը, մինչդեռ այն (տառերի հաջորդականության խախտու-

---

24 Ի դեպ, Հալիձորի Ն. Մ. Թանգի 1891 թ. հրատարակած երկու արձանագրությունները Ս. Բարխուդարյանը համարել է կորած («Դիվան», պրակ II, էջ 141)։ Սակայն զրանք և երկու այլ տապանագրեր նկատվել և ընդօրինակվել են 1970 թ. նշված արշավախմբի կողմից, ուսանակցությամբ Ս. Ց. Սարգսյանի։ Այդ արձանագրություններն են (գծ. 20, ա, բ, գ, դ).

ա) ԱՅՍ Է/Լ Տ.Ա.Պ.Ա.Ն /ԿԱՊԱՆԵՑ/Ի ՊԱՂՏԱՍ/ԱՐԻ ՈՐԴԻ ԳԱՊՐԻԷ/Լ ՎԱՐԴԱՊ/ԵՏԻՆ/. ԹՎ. Ռ/ՃԻ (1671), բ) ԱՅՍ Է ՏԱՊ/ԱՆ ԱՌ/ԱՔՐԷ/Լ Ս/ՄԱՐԴՄԱՊԵ/ՏԻՆ, ԱՌ/ԱՂ/ՆՈՐԴ ՍՏԱ/ԹԷԻ ՎԱՆՔ/ԻՆ. Ի ԹՎԻՆ /ՌՃԼԱԿԸ-ԻՆ (1719), գ) ԱՅՍ Է Տ/Ա/Պ/Ա/Ն/ ՓԱՐՍԱՏԱՆԻ /ԿՈՂԱԿԻՑ/ ՌԸԵԱՆԻՆ/. Թ/ՎԻՆ ՌՃՂԶ (1747), դ) /ՅԻՇԵ/Ա ՔՐԻՍՏՈՍ ԱՄՍՈՒԱՇ/ Զ ՀԱՅՐ ՅՈ/ՎԱ-ՆԻՍ։

մով ու կրկնությամբ) ստույգ ընթերցվում է ԿԱՐԱՊԵՏԻՆ։ Գրիչները կապգրերը փորագրել են հնարամտորեն հարմարեցնելով տեղին և երբեմն անհնարին է եղել պահպանել նրանց հաջորդականությունը։ Ուստի, նախ անհրաժեշտ է գտնել բառիմաստը և ըստ այդմ վերծանել այն։ Հասկանալի է, որ կապգրերի բացումը անհամեմատ դյուրին է ընդհանուր տեքստի մեջ, նախադաս և ետադաս բառերի, հարակից իմաստների օրգանական կապի միջոցով։ Այսպես, օրինակ, Արենիի 1679 թ. տապանագրի կապգրերը (գծ. 21) ստույգ կարելի է վերծանել միայն տեքստում՝ ՈՐ է ՈՐԴԻ։ Տաթևի վանքի արձանագրություններից մեկում թվարկված են Գեղարքունյաց քահանաների անունները։ Երրորդ տողի կապգրերը[20] Ս. Բարխուդարյանը վերծանել է ՎԱՐԱՆԴ, մինչդեռ, մեր կարծիքով, այն պետք է կարդալ ՎԱՐԴԱՆ։

Սխալ տառադարձման հետևանքով երբեմն հիշատակագրությունը հիմնովին աղավաղվում, կորցնում է իր իմաստը։ Օրինակ՝ Մուղնու ս. Գևորգ եկեղեցու արևելյան պատի արձանագրությունը ընթերցվել է հետևյալ կերպ. Խաչս յիշատակ է Սիպղոմոս? սարկաւագին եւ ծնողացն իւրոց Պապային եւ... Ետու զՊարխոռն վասն հանգուցելոյն. թվ. էՃԻԹ ասմանազեան[26], մինչդեռ սա կապ չունի բնագրի հետ, որը մեր ընթերցմամբ հետևյալն է. ՍՄՈՒՐՈՒԹ ԽԱՉԻ ՅԻՇԱՏԱԿ է ՇԻՊ ՂԱՐԱՀԻՍԱՐՅԻ / Շապին Գարահիսար / ՄԻ/ՆԱՍ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԵՒ ԾՆՕՂԱՑՆ՝ ՅԱԿՈԲԻՆ, ԵԼԶԲԱՀԱՐԻՆ ԵՒ / ԵՂԲԱՐՑՆ՝ ՄԵԼՔՈՆԻՆ, ԽՈՒՊԱ-ՍԱՐԻՆ ԵՒ ԱՄՄԵՆԱՅՆՈ ԿԵՆԴԱՆԵԼԱՅՑ ԵՒ ՀԱՆԳԼՈՅԻ/ՅԵԼՈՅ. Ի ԹՎԻՆ ՌՃԺԹ (1670)։ ԱԼԷՔՍԱՆ ՆՕՏԱՐ։

Վերծանման ընթացքում շտապողականության հետևանքով առաջացած ամենափոքր վրիպումն անգամ կարող է թյուրիմացությունների տեղիք տալ։ Այսպես՝ Զոդի դերեզմանատան XVII դ. կոթողներից մեկի արձանագրության հրատարակիչներ Մ. Սմբատյանը[27] և Ե. Լալայանը քարգործ բառը ընթերցել են չարագործ և վարպետը՝ ՄԵՂԱՅՊԱՐՏ Ք/ԱՐԳՈՐԾ ՁՕՀՐԱՊԸ դարձել է չարագործ ու այդպես էլ ընդունվել է[28]։

Գոռայրավանքի երրորդ եկեղեցու արևմտյան մուտքից աջ, 1186 թ. խաչքարի 10 տողանոց անեղծ ու դյուրըմբռնելի նվիրագրի մի հատվածը ոչ ճիշտ բառանջատման հետևանքով իսպառ աղավաղվել է[29]. մամքնանոցս կագնեցի գրրմիսա գիսե բեմբո։ Ավելորդ չենք համարում ներկայացնել արձանագրության մեր վերծանությունը՝ ընդգծելով տվյալ հատվածը (գծ. 22). Թ. ՈԼԷ (1186) ԵՍ ԽԱՉԳՈՐԾՍ/, ՄԱՄՔԱՆԱ ՍՆՈՒՅԱՆՑՍ, ԳՆԵՑ/Ի ՁԲՐՏԻՍ ԱՅԳԻՍ ԵՒ ՆՏՈՒ / Ի ՍՄՈՒՐՈՒԹ ԿԱԹՈՂԻԿԵՍ ՎՐԱՅՆ ԻՄ / ՀՈԳՈՅՍ. ԱՌԱՋՆՈՐԴ/ՈՎ ԼԻՆԻ ՍՄՈՒՐՈՒԹ ԵԿԵՂԵՑՈՅՍ / ՊԱՐՏԻ ԻՆՁ ՏԱՐԻՆ Բ. (2) ԱՒ/Ր ԺԱՄ. ՈՐ ԽԱՓԱՆԷ Ի/Մ ՄԵՂԱՅՍ ՏԵՐ Ե ԱՌԱՋ/Ի ԱՄՍՈՒՆՈՅ. ԱՄԵՆ։

Զոլաքարի տապանագրերից մեկը, որն ունի շրջանաձև կետադրական նշաններ, վերծանվել է հետևյալ կերպ. ԱՅՍ է ՀԱՆԳԻՍՏ ՇԱՊԱՆԻՆ, ՈՐ ՏՂԱ

---

25 «Դիվան», պրակ II, էջ 17, արձ. 16։

26 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 184, «Վիմական տարեգիր», էջ 122։

27 Մ. Սմբատյանց, Գեղարքունի, Վաղարշապատ, 1895, էջ 620։ Այդ չորս կոթողներից մեկը, Թրիլիսի տեղափոխման միջոցին, կոտրվել և մնացել է կես ճանապարհին։ Մեսրովբ Տեր-Ն՝ովսեփյանը այն բերել է Էջմիածին (տեղադրված է ճեմարանի բակում)։

28 «Դիվան», պրակ IV, էջ 333, արձ. 1354։

29 «Վիմական տարեգիր», էջ 36, տե՛ս «Լուսա», 1905, Բ, էջ 326։

ՀԱՍԱԿ/ԱԻՔ ՓԼՈՅԽԵՑԱԻ Ի ՔՍ. ԱՄԱՑ :ԺԶ։ (16) ԹՎ.։ ԹԺ[30]։ Այնուհետև ծանոթագրվել է «թվական տառերը գրված են պարզ, բայց, անշուշտ՝ սղված են և տեղերը շփոթված»։ Նույն արձանագրությունը մեր վերծանությամբ ունի հետևյալ տեսքը (գծ. 23). ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ ՇԱՀՊԱՐԻՆ, ՈՐ ՏՂԱՑ ՀԱՍԱԿ/ԱԻ ՓՈԽԵՑԱԻ Ի ՔՐԻՍՏՈՅՍ ԱՄԱՑ ԺԶ (16), ԹՎԼ ԻՆՅ ՌԺ (1561)։

Վիմագիր տեքստերի հավաքման-վերծանման աշխատանքը հատկապես դժվարանում է սոցիալական, տնտեսական, հարկապարտությային տերմինները, անծանոթ կոչումները մեկնաբանելիս, եթե մինչև իսկ գրանցում կապերը սակավ են։

Սանահնի վանքի մեծ գավթի XIII դ. արձանագրություններից մեկի էկի վանքս ու զտեղս անմարդ գտաք[31] հատվածը Ս. Ջալալյանը վերծանել է եկի ի վանքս զտեղսան մարդ գդուանք[32]։

Վիմագիր տեքստերի ճշգրիտ վերծանմանը նպաստում են նաև համառոտագրող և բառանջատող կետադրական նշանները։ Ինչպես հայտնի է, հիմնականում X դ. սկսած, ձեռագրերում օգտագործվել են կետադրության ու առոգանության նշաններ, որոնք, ժամանակի ընթացքում մեծ փոփոխությունների ենթարկվելով[33], հասել են այսօրվա կատարելության։ Վիմագրերում ներկայիս իմաստով կետադրական ու առոգանության նշաններ չեն օգտագործվել, սակայն ստեղծվել են հատուկ նշաններ համառոտագրելու, թվային համարժեք տառերը, սահմանվող ժամ-պատարագները շեշտելու և դրանց ընթերցումը դյուրացնելու համար։ VI—VII դդ. վիմագրերում միջակետ ու վերջակետ են դրվել թիվ արտահայտող տառերի երկու կողմերում և երբեմն պատվոգրով ընդգծել (օրինակ՝ Արուճի տաճարի 666 թ. կառուցողական արձանագրության մեջ)։ Այս կարգը պահպանվել է հետագայում ևս։ Օրինակ, Աբովյանի շրջանի Կապուտանի կրկնահարկ եկեղեցու կառուցման գեղագիր թվատառերը (ՍԹՎ ՉՂԲ—1349) անջատված են երեք կետերով (նկ. 3)։ XIV դ. սկսած մատնավոր կիրառություն են ստանում կետերով, գծերով, ազեղներով, շրջանակներով, քառանկյունիներով բառանջատումները, իսկ XVII դ. կեսերից, երբեմն որոշ արձանագրություններ լրիվ բառանջատվում են։ Ճիշտ է, դրանց թիվը սակավ է, բայց այդպիսիք կան։ XIV դ. պատվի և բառանջատման նշանները դառնում են յուրատեսակ զարդանախշեր։ XIX դ. տապանագրերում ստեպ-ստեպ կիրառվում են միջակետը և ստորակետը ներկայիս իմաստային առումով։ Թովուզի և Բերդի տապանագրերում որպես միջակետեր օգտագործված են զույգ ապաթարցերը։

Վիմագրերում կիրառվել են երկու կարգի «կետադրական» նշաններ՝ անջատող և համառոտագրող, իսկ որոշ նշաններ հավասարապես օգտագործվել են և՛ անջատման, և՛ համառոտագրման դեպքում։

Թվական արժեք ունեցող տառերը, երբեմն էլ առանձին բառերը, տողերը անջատող (հատկապես բանաստեղծական տեքստերում), ինչպես նաև տա-

---

30 «Դիվան», պրակ IV, էջ 192, արձ. 788։ Ժամանակը համարվել է XV դ. վերջը. գծագրվել է բնագրին անհարիր՝ հավելումներով ու բացթողումներով, չեն պահպանվել տառաձևերը։

31 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 125, արձ. 47։

32 Ս. Ջալալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, էջ 22։

33 Հարցի հանգամանալից ուսումնասիրությունը տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 178—186։

ոերը համառոտագրող բազմազան նշաններից[34] ստորև ներկայացնում ենք հետևյալները (տախտակ Ա)։

Վիմագրերի «կետադրական» նշանները, որոնք չեն սպառվում ներկայացված 202-ով, օգնում են վիմագիր տեքստերի ճիշտ և ամբողջական վերծանման։

Նկ. 3

Կետադրական որոշ նշանների կիրառությանը ծանոթանալու նպատակով բերենք մի քանի օրինակ (տախտակ Բ).

Ա. Արձանագրված այս հինավուրց բեկորը (գծ. Ա) ագուցված է Ղափանի շրջանի Շրվենենց գյուղի արևմտյան կողմում գտնվող կից բազիլիկաներից մեկի պատի ստորին մասում[35]։ Այստեղ թվատառերը երկու կողմից առնված են անջատող վերջակետաձև նշանների մեջ։ Այն վերծանում ենք. ԹՎ/ԻՆ/ ՆՇԲ (1003) ԴԱՒԻԹ ԵՐ/ԷՑ ՓՈԽԵԱՎ/ ԽԱՉԻՍ...

Բ. Երկրորդ արձանագրությունը (գծ. Բ) փորագրված է Ստեփանավանի շրջանի Ագարակ գյուղի ս. Սիոն եկեղեցու կառուցման առթիվ նույն տեղում կանգնեցված խաչքարի ստորին մասում։ Առանց կապերի, վերջակետերի միջոցով թվատառերի անջատմամբ և մեկ պատվոգրով այս պարզ ու դյուրըմբռների վիմագիրը վերծանվում է. Ի ԹՈՒԼԻՆ/ ՀԱՅՈՑ ՈՇ (1201), ԵՍ՝ ԳՐ/ԻԳՈՐ, ՆՈՒԱՍՏ ԿՐԱՒՆԱՒՈՐ ՇԻ/ՆԵՑԻ ՁՍՄՈՒՐՈՒԲ ՍԻՈՆՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ/ ՁԽԱՉՍ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԱՆ/ԷՔ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՍՁԻՔ։

---

34 Գատվո նշանով համառոտագրության մասին տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, էջ 64—69 և Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, էջ 195—200։

35 Այս արձանագրությունը հայտնաբերել է նույն գյուղի դպրոցի դիրեկտոր, պատմաբան Անուշավան Ագամյանը։

Գ. Արցախի հին գյուղերից մեկն այժմ կոչվում է Քիլիսա (Քալբաջարի շրջան) տեղի բազիլիկ եկեղեցու պատճառով։ Նրա մուտքից աջ, պատին ագուցված խաչքարի ստորին մասի արձանագրության մեջ օգտագործվել են միշակետ և վերջակետ (գծ. Գ)։ Արձանագրությունը վերծանվում է. Ի ԹՎԻՍ ՀԱՌՅ ՈՂԵ (1246) / ԷՐ. ԵՍ ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲ/ՈՅՆ ԿԱԳՆԵՑԻ ՋԽԱՋՍ/ ԻՆՂԶ ԵՒ ՅԱՂՄՈՒՐՄՆՈՅ ԻՂՄՈՅ,



Տախտակ Բ

Դ. Նոյեմբերյանի շրջանի Մշակավանք հուշարձանի աջ խորանի բարավորի ՏԷՐ ԱՄՍՏՈՒԱՅԾ ՈՂՈՐՄԵԱՅ ԱՋԱՏԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՅՆ. ԱՄԷՆ. ՂԹՎԻՆՅ ՈՂՋ (1247) արձանագրության մեջ[36] (գծ. Դ) հետաքրքիր են պատվո նշանները ու թվատառերն առանձնացնող եռակետերը։

Ե. Մշակավանքի գավթի հարավային պատի արևմտյան եզրի արձանագրության մեջ կան հիրավի հետաքրքիր «կետադրական» նշաններ (գծ. Ե)։ Մ. Բարխուդարյանի աննշան վրիպումների[37] շտկմամբ այն վերծանում ենք այս-

36 Մակար Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 90։

37 Նույն տեղում, էջ 386։



Գծ. 1—23

պես. Ի ԹՎԱԿ[ԱՆԻՍ ՀԱՅՈՑ] ԷՃԺԲ [(7×100)+(10+2)+551]=1263, ԵՍ՝ ՎԱՍԱԿ ՍԻՍԼԱԹՈՒՆՍ ԷԳԻ ԵՏ/ՈՒ ԱՐՍՏՈՒԱՅԾԱԾՆԻՍ. ՌԸՍՏԱԿԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԱՔ Բ (2) ԺԱՄ ԱՒԵՏԵԼԱ/ՅՆ ՏԱՒՆԻՆ. ՈՎ/ ՁԻՐՈՒՐ ՏԱՅ ԱՐՍՏՈՒԾՈՅՑ ԱՆԻԾԱԾ ԵՂ/ԻՑԻ։

Զ. Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղի գերեզմանոցի երկատված մի խաչքարի արձանագրությունը հրատարակվել է սխալներով[38], իսկ կետադրական նշանները, աղատ ընթերցման հետևանքով, չեն պահպանվել (գծ. Զ)։ Այն վերծանում ենք. Ի ԹՎ/ԻՆ/ ՁԼԳ (1284) ԿԱՆԳՆԵՑԱՐԻ ԽԱՀ/ՁՍ Ի ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻՒԱՆ ՎԱՐՀԱՄԱՐՅ/ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ԻՒՐՈ՝ ՍՈՓԵ ԵՒ ՁԷԱՒՇԱԿԱՑ ԻՒՐՈՅ. ԱՄԷՆ։ Այստեղ ուշագրավ են կետադրական նշանները և եռաստեղն Ա գլխատառի գործածությունը։

Է. Վարդենիսի շրջանի Ակունք գյուղից 3 կմ հարավ-արևմուտքի «Կույր աղբյուր» գյուղատեղին, եկեղեցու ավերակները, խաչքարերը, տապանաքարերը վկայում են XIII—XVIII դդ. այստեղի կյանքի գոյատևման փաստը։ Տեղի հնագույն արձանագրություններից մեկը պահպանվում է երկատված խոշոր խաչքարի տապալված պատվանդանի վրա։ Արձանագրության մեջ անունները միմյանցից անջատված են մեկ կետով (գծ. Է). Ի ԹՎ/ԻՆ/ /ՁԼԶ (1287). ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱՅԿԱԼ/ԻՆ ԱՐՍՏՈՒԾՈՅՑ ԵՍ ԽԱՐԻՓՇԱՀ, ԴԱՆԻ/ԱՅԼՍ, ՊՈՌՇՍ, ՍԱԴՈՒՆՍ ԿԱՆԿՆԵ/ՑԱՔ ՍՐՈՒՐՅԲ ԳՐԻԳՈՐՍ ՀԱՒՐ ԻՄՈՅ ՄՍԽ/ԱՐԻՆ, ՄԱՒՐ ԻՄՈՅ ՏԻՐԱՄԱՒՐՆ./ ՈՎ ԿԱՐԴԷՔ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇՈՅԷՔ։

Ը. Կետադրական, պատվոդրման զանազան նշաններով, ինչպես նաև տարատիպ կապդրերով հարուստ է Աղդան գյուղից (Իջևանի շրջան) 4 կմ հարավ-արևելք, դարավոր անտառում ծվարած բազիլիկաներից մեկի բարավորի ներսի ճակատի XIII դ. արձանագրությունը (գծ. Ը)[39] ևս. ԱՐՍՏՈՒԱՅԾ ՈՂԼՈՐՄ/Յ/ ԹԱԲԵՐԻՆ/. ԱՄԷՆ/։ ԿԱՄԱՒ ԲԱՐԵՐԼԱՐ/ՅԻՆ ԱՐՍՏՈՒԾՈՅՑ ԵՍ ԼՈՒՍԵՐՍ ՄԻԱԲԱՆԵՑԱ/ ԱՐՍՏՈՒՅԱԾԱԾՆԻՍ, ԵՏՈՒ Մ (200) ՈՓՄԻՏՅԱԿ, ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏ/ՈՒՆ Բ (2) ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ԾԱՌԶԱՐԴԱՐԻ՝ Ա (1) ՀԱՒՐ ԻՄ /ՇՆԱՒՈՐԼԱ/ Ա (1) ՄԱՒՐ ԻՄ ԱԼՄԱՍԹԷ. ՈՎ ԽԱՓԱՆԼԷ ԴԱՏԻ ԱՐՍՏՈՒԾՈՅՑ։ ԱՐՍՏՈՒԱՅԾ ՈՂՈՐԼՄԻ/ ԼՈՒՍԵՐ/ԻՆ/. ԱՄԷՆ։

Թ. Համանման կետադրական նշաններ ունի Ամաղու-Նորավանքի ս. Աստվածածին եկեղեցու մոտի տեղահանված սալաքարի անտիպ հիշատակությունը (գծ Թ). ԱՆԴՐԷ/ԱՍԻՆ Ա/ՂԱՋԵՄ /ՅԻՇԵԼ. Ի ԹՎԻՍ ՁՇԹ (1310)։

Ժ. Հայաստանի սահմաններից դուրս գտնվող վիմագրերում ևս օգտագործվել են պատվոդրման նույնանման նշաններ։ Ներկայացվող արձանագրությունը փորագրված է Կիևի ս. Սոֆիա տաճարի գլխավոր աբսիդին կից խորանի հյուսիսային պատին (գծ. Ժ), որն է՝ ԹՎԻՒ ՌԻԴ (1575). /ՀԱՄԲԱՐՁՈՒՄ...

Եղվարդի գերեզմանոցի դագաղաձև տապանաքարերից մեկի ցարդ անանկատ մնացած արձանագրությունը հետաքրքիր է թե՛ բովանդակությամբ և թե՛ կետադրությամբ, ուր կետերն օգտագործված են բառանջատման և աղման նպատակով (նկ. 4)։ Արձանագրությունը վերծանվում է. Ի ԹՎՈՒԻՍ ՀԱՅՈՑ Ո-ԻՍ ԵՒ Թ (600+9+551)=1160 ԿԱՆԳՆԵՑԱԻ ՍՐՈՒՐՅԲ ՆՇԱՆԱՆԻՍ Ի ԲԱՐԵ-

38 Ս. Ջալալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, էջ 124, «Ազգագրական հանդես», գիրք VII և VIII, էջ 338, «Վիմական տարեգիր», էջ 126։

39 Արձանագրությունն ընդօրինակել ենք 1972 թ. գիտական արշավի ժամանակ, որին մասնակցում էր նաև պատմաբան Օ. Պ. Մելիքսեթյանը։

ԽԱԻՍՈՒԹԻԼԻՅՆ ՀՈԳՈՅ ՍՈՅԱՅ ՊՏՏԿԱՆՍ ԵՒ ՀԵՏԵՒԱԿԻՆ ԴՈՐՈՒՄ. ՏԷՐ/ԱՄՍՈՒԱՂԵ ՄԵԵ ՈՂՈՐՄՈՒԹԼԻՒՆ ՊԱՐԳԵՒԵՍՅԷ ՍՈՅԱՅ ԵՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ, /ՈՐ Է ՈՐԴԻ ՍՈՐԱ ԵՒ ՄԱՒՐ ԻՒՐՈՅ։ ԱՐԴ, ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՒՔ ԶԿԱԶԼՄՅՈՂՍ ԶՎԱՐԴԱՆ/ ՅԻՇԷԼՍՆՋԻՔ Ի ՔԼՐԻՍՏՈՅՍ։

Նկ. 4

Թեոդոսիայի ս. Հրեշտակապետաց եկեղեցում կան հետաքրքիր քանդակներով մարմարե տապանաքարեր։ Դրանցից մեկի հիշատակագրությունը վաղամեռիկ Խանիպիքեի հիշատակին նվիրված սրտառուչ բանաստեղծություն է՝ ձեռագրերին ներհատոսկ թվախառը ծածկագիր թվով և լրիվ բառանշատմամբ.

Ինչպես տեսնում ենք, լրիվ բառանշատման շնորհիվ արձանագրությունը փաստորեն ընթերցվում է առանց դժվարության և վերանում նրա վերծանման անհրաժեշտությունը։ Արձանագրության թվականը ծածկագրված է ճանաչ բառով, որից պետք է հանել վեց և տասնյոթ [Ճ (100)+Ա (1)+Ն (400)+Ա (1)+Ջ (700)+(551)—(6+17)]= 1730։


ԽԱՆԻՊԻՔԷ՝ԴՈՒՍՐ՝ ԸՂՋԱԼ Ի։
ՊԱՏԱՒ՝ՀՈՐՆ՝ԻՄ՝ ԲԱՂՁԱԼ Ի։
ՆՈՐ՝ՀԱՐՍՆԱՅԵԱՆ՝ՍԻՐՈՎ՝ՍՐՏԻ։
ԹԷՊԷՏ՝ ՁԱՅՆ՝ ՈՉ՝ՎԱՅԵԼԵՅԻ։
ՔՆ՝ՁԻ՝ԻՈՐՀԱԿ՝ՄԱՅՆ՝ԷՅԱ Ս։
ԱՐԱ՝ԽԼՄՐՈՅՍ՝ԲԱԶՈՒՄՎՆԱ Ս։
ԱՅՍՄ՝ԿԵՆԱՅ՝ԱՐԱՐ՝ԱՆՄ Ս։
ՏԷՐՆ՝ՏԱՅԷ՝ԻՆՁ՝ԶՎԷՊՊՆ՝ԴԱՍ։
ՃԱՆԱՉ՝ԹՎՈՅՍ՝ԻԲԱՏ՝ՅԱՅԵՍ։
ՕՎԷՅ՝ԼՏՒԼՈՆԵԱՔՆ ԿՐՃՄՅ՝

Վիմագիր բնագրերը ուշադիր քննելուց հետո կարելի է մատնանշել հայ վիմագրության համառոտագրման հետևյալ հիմնական սկզբունքները։

ա) Եղբայրագիր համառոտագրություն—երբ առաջին տառի աջ սյունագծին կցվում-հյուսվում է հաջորդ տառի ձախ ստեղնը կամ «նախորդ տառի աջ սյունագծին միանում է հաջորդ տառի ձախ սյունագիծը»[40] և, այսպիսով, սյունագծերից մեկը հավասարապես ծառայում է առաջին և երկրորդ տառերին[41]։

---

40 Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 188։

41 Ներկայացվող կապերն ընտրել ենք պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանի, Ս. Բարխուդարյանի համապատասխան աշխատություններից և մեր հավաքածուից։

ԱՂ-աղ	ՐԴՈ-ՐԴՈ	ՈՒԹԵ-ՈՒԹԵ	ՍՍԱՐ-ՍՍԱՐ
ՍԱ-սա	ԱՌԱ-ԱՌԱ	ՎԱՐԴ-վարդ	ՈՍԱՐ-ՈՍԱՐ
ՍՌ-սռ	ՍԱԿ-սակ	ՍԱՆԻ-սանի	ՌՍՈՒ-ՌՍՈՒ
ԱՍ-աս	ԱՐԴ-արդ	ԱՎԱՐ-ավար	ԱԹՌՈՂԻ-աթռողի
ՆԱ-նա	ՆԵՏ-նետ	ՆՈՐԴ-նորդ	ԳԻՄԻ-գաւորի
ՈՂ-ող	ՆՈՂ-նող	ՓԱՌԱ-փառա	ՈՐԴՈՒԹԵ-որդութե

բ) **Միատառ համառոտագրություն**—*երբ մեկ տառի վրա կցվում են մեկ կամ ավելի այլ տառեր։*

ԵՍ-ես	ԺԱՄ-ժամ	ՎԱՆ-վան	ԴԱՒԹ-դաւթ	ԻՍ-հաղի
ԱՅ-այ	ԿԱՄ-կամ	ՈՎԵ-ովե	ԵՒՄԻ-եւմի	ՄՒԱԲ-մուաբ
ԹՒ-թի	ԲԱՆ-բան	ՄԱՒ-մաւ	ԱՒՐԻ-աւրի	ՆԱՏԻ-նատի
ԳՈՐ-գոր	ԲԱՆ-բան	ԱԳՐ-ագր	ԱՌՒՆ-առուն	ՓԱՒՐ-փաւր
ԽԱՍ-խաս	ՊԵՏ-պետ	ՈՒՆՔ-ունք	ԱՌՒՆ-առուն	ՔՆԱՒ-քնաւ
ՉՄԱ-չմա	ՔԱՐ-քար	ՉՄՆԱ-չմնա	ԱՄՒՐ-ամուր	ԴԱՏԻ-դատի

գ) **Միատառ գաղտնագիր համառոտագրություն**—*երբ տառերից որևէ մեկը կամ տառի մի մասը՝ Ն-ի, Ք-ի, Տ-ի, Ե-ի, Ղ-ի և այլ տառերի վերին կամ ստորին հատվածները չեն փորագրվում, կամ էլ նույն տառը (կամ տառի մի մասը) կրկնվում է, բայց այդ մասին չկա հուշող նշան։ Այս դեպքում տառն ու տառերի քանակը կարելի է կռահել բառիմաստի ճիշտ մեկնաբանությամբ։ Օգտագործվում են կապգրման ա և բ տարբերակները։*

ԵՐ-ԵՏ	ԱՀ-ԱՀԱ	ՈՐԴԻ-ՈՐԴԻ	ՆԵՐ-ՆՍԵՐ	ՀԱՆԱՊԱՐ-ՀԱՆԱՊԱՐ
ՆՍ-ՆՍ	ՊՐ-ՆՈՐ	ԱՒԱԳ-ԱՒԱԳ	ԻՍՏՐ-ԻՍՏՐ	ՆԵՐՒՆ-ԱՐՒՆ
ԴԵ-դե	ԴԱՏ-դատ	ԻՍՒՆ-ՒՍՒՆ	ԱՄԷՆ-ԱՄԷՆ	ՄԱՆԵ-մանե
ԶԻ-զի	ԱՄԱ-ամա	ԱՄԱՒ-ամաւ	ՆԱՒԱ-նաւա	ԱՏԱՐԻ-ատարի
ՆԷ-նէ	ԳՈՂ-գող	ԻՆՈՐ-ինոր	ԱՄԱՒՆ-ամաւն	ԱՒՐՆ-աւրն
ՆԻ-նի	ԱՆԱ-անա	ԱՒՐԱ-աւրա	ԱՓԱՆԻ-ափանի	ԱՓԱՆԷ-ափանէ

դ) **Խառը տարբերակ**—*երբ տառերը միաժամանակ կցվում են հաջորդաբար (ա տարբերակ) և իրար վրա (բ տարբերակ) կամ տառը կրկնվում է (գ տարբերակ)։ Սա կապգրման առավել բարդ ձևն է և վերծանվում է դժվարությամբ։ Այս դեպքում ևս, առանց բառիմաստի բացահայտման, հազիվ թե հնարավոր լինի ճիշտ վերծանել կցագիրը։*



ե) Պարագիտային համառոտագրություն—*այս դեպքում որևէ տառի կցվելու հնարավորություն չունեցող մի քանի տառեր դրոշմվում են Ա-ին, Ս-ին, մի տառի բնորոշ հատվածը կցվում է մի այլ տառի, կախվում նրա «քթից», «նստում» ուին*[42], *գավակին կամ կտրվում է մայր տառի մի ստեղնի կեսը՝ վրան մի այլ տառ փորագրելու համար։*



զ) Ոցագիր[43] համառոտագրություն—*ձեռագրերում վ, գ, լ, շ, ն փոքրատառերի ստորին երուատների վրա, տեղ խնայելու նպատակով, մի տառի տեղավորման սկզբունքը շատ ավելի բազմազան ու խառն է վիմագրության մեջ։ Կ. Ղաֆադարյանը նկատել է տառերի վերին վերջավորության տակ և ստորին վերջավորության վրա «մի այլ փոքրադիր տառ գրելու երևույթը»*[44]*։*



է) Կափարիչաձև համառոտագրություն—*կազմվում է երկստեղն տառերի միջոցով և այստեղ առկա են բ և ղ տարբերակների որոշ տարրերը։*



42 Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 188։
43 Նույն տեղում, էջ 190։
44 Կ. Ղաֆադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, էջ 49։

ը) Ալնգուրատիպ համառոտագրություն—Ջ, Ծ, Զ, Յ, Շ, Չ, Ց, ավելի ուշ՝ Ս տառերի բացվածքներում տեղադրվում է մի այլ տառ։ Կ. Ղաֆադարյանը նկատել է, որ XIII դ. արձանագրություններում պատահում է Ց տառի փորի մեջ գրված մի այլ փոքր գիր[45], իսկ պրոֆեսոր Ա. Աբրահամյանի դիտարկմամբ Շ, Չ, Ջ գրերը «տառեր են ընդունում իրենց բոլորակի մեջ»[46]։ Մեր նկատած ութ տառերի բոլորակների մեջ մի այլ՝ փոքր տառի գրության ձևը տարածված է Սանահինի, Հաղբատի, Ավանի, Հոռոմայրի և այլ հուշարձանների վիմագրերում։ Համառոտագրության այս եղանակը համարում ենք առանձին և հնավանդ ձևերից մեկը։



թ) Հայ վիմագրության մեջ գոյություն ունի տարածում չստացած համառոտագրման մի եզակի ձև. դա այն է, երբ ամբողջական տառի փոխարեն գրվում է նրա մի մասը՝ խախտելով մեսրոպյան տառաձևերը։ Այսպես, Հավուց թառի ս. Կարապետ տապանատան 1213 թ., Ալայաղի արևմտակողմի գույգ որմնախաչերի 1273 թ., Հոռոմայրի վանքի XII—XIII դդ., Արարատի շրջանի ս. Կարապետ վանքի 1346 թ., Զորակապի (Անիի շրջան) եկեղեցու 1868 թ. արձանագրություններում ճ-ն Հին-Ջուղայի XVI—XVII դդ. տապանագրերում ա-երը գրված են հետևյալ ձևով.



ժ) Վիմագիր արձանագրություններում մեծ թիվ են կազմում հայոց, տէր, ուեառնէ, աստուծոյ, Հիսուս, Յիսուս, Քրիստոս, Քրիստոսի, սուրբ, թվին, ամեն, աստված, վասն և պարոն բառերը։ Սուրբ և վասն բառերը հիմնականում գրվում են արձանագրության սկզբում, ամենը՝ վերջում, թվինը՝ սկզբում և վերջում, պարոնը՝ միջում, մնացածը՝ տարբեր մասերում։ Այդ բառերը համառոտագրվում են պատվո նշանով կամ առանց դրա՝ հետևյալ կերպ.



45 Նույն տեղում։

46 Ա. Գ. Աբրահամյան, Նշվ. աշխ., էջ 188։

Այս ամենը հնարավորություն են ընձեռում հանգելու որոշ հետևություններ.

1. Վիմագրության մեջ համառոտագրման հնարավորությունները գործնականում անսահմանափակ են։

2. Որմերի ու կոթողների վրայի բազմահազար վիմագրերը փորագրված են մեծատառերով, թեև հատուկենտ օգտագործված են նաև փոքրատառեր։

3. «Բոլոր վիմագրերը, սկսած հնագույնից մինչև նորագույնը, գրված են բոլորաձև երկաթագրով»։ Մերթընդմերթ օգտագործված են «գրի այլ տեսակներ» ևս[47]։

4. Կցագրման-կապգրման համար մեկընդմիշտ հաստատված, պարտադիր ու որոշակի կանոններ չեն եղել, այն բխել է կոնկրետ հնարավորությունից և նպատակահարմարությունից։

5. Համառոտագրությունը հետևանք է տեղի, աշխատանքի, ժամանակի խնայողության կենսական պահանջի։

6. Մեկ կամ մի քանի տառերի համառոտագրման դեպքում, որոշ բացառությամբ, օգտագործվել են գծային, կետային և այլ պատվո նշաններ։

7. Կցագրումը, կապգրումը ամեն դեպքում կատարվել է հաշվի առնելով դրա վերծանման ու գեղագրության շահերը։

8. Կցագրերը հիմնականում կազմվում են Ա տառի միջոցով, անկախ այն բանից, թե տվյալ կցագիրը Ա-ով, թե Ա պարունակող այլ տառով է սկսվում։ Բացառությամբ Ջ, Ճ, Չ, Ջ տառերի՝ Ա-ին կցվում են մնացած բոլոր տառերը։ Ա-ն կապգրման առանցքակետն է։ Մնացած տառերի կցագրման հնարավորությունները անհամեմատ սահմանափակ են, եթե նկատի չունենանք Մ, Ո, Ռ. Ս տառերը, որոնք Ա-ի տարատեսակներն են (մեկ կամարով միացող երկսյունագիծ գրեր են)։

9. Կցագրերում տառերի հաջորդականությունը պարտադիր չէ։

10. Գրեթե բոլոր կապգրերը իրենց գոյությունը պահպանել են մինչև XVIII դ. սկիզբը։ Հատկապես տպագրության լայն տարածումից հետո պատմական նշանակալից իրադարձությունների, հրահանգների, կարգադրությունների արձանագրումը քարերի վրա անիմաստ է դառնում, ուստի կապգրերի կիրառությունը շարունակվում է հիմնականում տապանագրերի մեջ՝ ընդհուպ մինչև մեր օրերը։

11. Բոլոր տառերը, որևէ կերպ, կցվում-կապդրվում են միմյանց։

12. Հայ վիմագրության մեջ, որքան մեզ հայտնի է, միակ տառը, որ չի կցվում մի այլ տառի և իրեն էլ ուրիշ տառ չի կապգրում, Ջ-ն է։ Զիգզագներով մերթ աջ, մերթ ձախ հակված, կեռ կատարով, ստորին ոլորմաններով ավարտվող այս տառը հարմար չէ կցագրման։ Հայկական տառերի մեջ անհամեմատ բարդ այս տառին կարելի է կցել Ի, Ր, Բ կամ իրեն կցել-նստեցնել Ա-ի, Ս-ի ստեղներին, բայց նման օրինակներ չկան։ Ինը հարյուրը ներկայացնող Ջ-ն միայնակ նիշ է, ավելի միայնակ, քան Ճ-ն։ Այստեղ ավելորդ չենք համարում ներկայացնել Քոբայրավանքի Երրորդ եկեղեցու մուտքի շրջանակի և բարավորի արձանագրությունը[48], ուր կան բազմաթիվ ուշագրավ կապգրեր և Ջ-ի օգտագործման մի դեպք.

---

[47] Կ. Ղաֆադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, էջ 21։

[48] Արձանագրությունը սխալաշատ հրատարակել է Ե. Լալայանը («Ազգագրական հան-

Աղաղակող նշաններ

ա) կենդանի նշաններ

բ) շրջանակային նշաններ

գ) գծային նշաններ

դ) ուղղանկյուն նշաններ

ե) շեղանկյուն նշաններ

զ) ապարանոցային նշաններ

է) սեպաձև նշաններ

ը) խառը նշաններ

Համառոտագրման նշաններ

ա) ուղղագիծ և վերնական նշաններ

բ) ուղղագիծ սպարնական նշաններ

գ) կետային նշաններ

դ) ապարանոցային նշաններ

ե) աղեղաձև նշաններ

զ) ուղղանկյուն նշաններ

է) անկյունային նշաններ

ը) վիրգաձև նշաններ

թ) ծիրանաձև նշաններ

ժ) խառը նշաններ

ժա) կարգանշաններ



ՔՐԻՍՏՈՅՍ ԱՐՍՏՈՒԱՅԾ ՅԻՇԵԱ ԶՄԱՐԻԱՄ ԵՒ ԶՌՈՒՍՈՒԳԱՆ Ի ԳԱԼՍՏԵԱՆ ՔՈՒՄ/, ԹՎՈՒՅՆ ՈՒ (1171) ԵՍ ՄԱՐԻԱՄ, ԴՈՒՍՏՐ ԿԻՒՐԻԿԵԻ/ ԹԱԳԱՒՈՐԻ, ՅԱՋԴԷ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՇԻՆ/ԵՑԻ ԶՄՐՈՒՐՅԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ ԱՒԳՆՈՒԹԵԱՄՅԲ ՔՒԵՐ ԻՄՈ/ ՌՈՒՍՈՒԳԱՆԱ, ՅԻՇԱՏԱԿ ՄԵԶ ԵՒ ԾՆՈՂ/ԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՒՐԱՔԻԵՐ ՄԵՐՈ ՌՈՒՍՈՒԳԱ/ՆԱ ԵՒ ԵՂԲԱՒՐ ՄԵՐՈ ԱԲԱՍԱ. ՈՐՔ ԵՐԿՐՊԱ/ԳԷՔ ՔՐԻՍՏՈՍՅԻ Ի ՍՐՈՒՐՅԲ ՔԱՒԱՐԱՆԻՍ ՅԻՇԵՍՋԻՔ Ի /ՔՐԻՍՏՈՅՍ, ԶԻ ՎԱՍՆ ՆԵՂՈՒԹԵՐԱՆ՝ ՏԵՂԻՈՅՍ ՇԱՏ ԱՇԽԱՏԵՑԱՔ։

Վերը բերված եզրահանգումները չի կարելի վերջնական ու անվերապահ համարել, քանի որ վիմագիր արձանագրությունների մեծ մասը գեռևս հավաքված-հրատարակված չէ։ Սակայն, անկախ գրանից, համառոտագրման վերոհիշյալ սկզբունքները, ինչպես և կետադրական նշանների ներկայացված համակարգը, երևում են, կարժանանան ուշադրության։

Համառոտագրման ավելի բարդ ձևը միատառ փակագրությունն է, որին կանդրադառնանք առանձին։

ЛИГАТУРА В АРМЯНСКОЙ ЭПИГРАФИКЕ

СУРЕН САГУМЯН

Резюме

Применение лигатур, криптограмм и других способов сокращения наблюдается еще в армянских древнейших ктиторских надписях V—VIII вв. Однако широкое применение в эпиграфике сокращенное письмо получает начиная с XI в., когда возникает необходимость на ограниченной каменной поверхности высекать более пространные грамоты, указы, вердикты светских и духовных правителей, дарственные, мемориальные и другие надписи влиятельных лиц средневековой Армении.

գեաս», գիրք VII և VIII, Թբիլիս, 1901), «Բորչալուի գավառ», էջ 420։ Նույնությամբ այն մաել է «Լուսաւոր»-ի և «Վիմական արեգրի» մեջ (էջ 30)։ Ջ-ի դրության այլ օրինակներ կան սույն հոդվածի մի քանի արձանագրություններում ևս։

Для наиболее идентичной дешифровки и исчерпывающего установления текста надписей важное значение приобретает умение точно раскрывать высеченные в них лигатуры, криптограммы и другие сокращения, с учетом всех палеографических характеристик надписей.

В специальной литературе эта сторона армянской эпиграфики и археографики недостаточно изучена. В работе описываются и классифицируются наиболее характерные лигатуры, сокращения и знаки препинания, применявшиеся в средневековой армянской эпиграфике.